**Արձանագրություն N 10**
**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի**
**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

**Երկիր**

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 14 մայիսի 2026թ.

**Ընթացակարգ**

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:

**Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

**Ծրագրի անվանումը**

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**Նիստին մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,
Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ս. Ալեքսանյանը, Ա. Առուշանյանը, Մ. Բաբայանը և Ա. Սերգոյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Մրցույթի փուլի հրավերի վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.**

---

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով գնման ընթացակարգի մրցույթի հրավերի հայտարարության վերաբերյալ 12.05.2026թ. ստացվել են հարցադրումներ և դրանց վերաբերյալ 14.05.2026թ. տրամադրվել պարզաբանում՝

**Հարց 1** Մենք մտադիր ենք ֆինանսական առաջարկը կառուցել հետևյալ կերպ.

2022-2026 թվականների աուդիտի ծառայությունների համար առաջարկի գնի 1 ձև՝ որպես մեկ ձև: Մինչև 2031 թվականը յուրաքանչյուր հաջորդ աուդիտի տարվա համար մենք կներկայացնենք առանձին և լրացուցիչ առաջարկի գնի ձև:

Այսինքն՝ մենք մեր առաջարկի հետ միասին կներկայացնենք լրացված առաջարկի գնի 6 ձև: Խնդրում ենք հաստատել, թե արդյոք մեր մոտեցումը ընդունելի է:

**Պարզաբանում 1** Խնդրում ենք նկատի ունենալ, որ Հայտատուն պետք է լրացնի Հավելված 2-ը՝ նշելով պայմանագրի ընդհանուր առաջարկվող գինը:

Բացի այդ, համաձայն Հավելված 2.1-ի, Հայտատուն պետք է ներկայացնի առանձին ֆինանսական առաջարկի ձևաթղթեր՝

- 2022–2025 թվականների ռետրոսպեկտիվ աուդիտի ծառայությունների համար, և
- 2026–2031 թվականների յուրաքանչյուր պայմանագրային տարվա համար՝ առանձին:

Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ 2026 թվականը պետք է դիտարկվի որպես հերթական պայմանագրային աուդիտի տարի և չի համարվում ռետրոսպեկտիվ աուդիտի ժամանակահատվածի մաս:

Համապատասխանաբար, ֆինանսական առաջարկի փաթեթը պետք է ներառի՝

• 1 ընդհանուր ֆինանսական առաջարկի ձև (Հավելված 2),

• 1 ֆինանսական առաջարկի ձևաթուղթ՝ 2022–2025 թվականների ռետրոսպեկտիվ աուդիտի ծառայությունների համար (Հավելված 2.1) , և

• 6 առանձին ֆինանսական առաջարկի ձևաթուղթ՝ 2026–2031 թվականների յուրաքանչյուր պայմանագրային տարվա համար (Հավելված 2.1):

**Հարց 2** Մեր բանկը տրամադրել է երաշխիքը անգլերեն լեզվով: Ենթադրում ենք, որ սա ընդունելի է, խնդրում ենք հաստատել:

**Պարզաբանում 2** Բանկի կողմից երաշխիքի տրամադրումը անգլերեն լեզվով ընդունելի է: Միաժամանակ համաձայն հրավերի 2-րդ մասի 2-րդ գլխի «Հայտին կից փաստաթղթերը օտար լեզվով (ռուսերեն կամ անգլերեն) ներկայացվելու դեպքում՝ հայերեն համարժեք թարգմանությունների ներկայացումը պարտադիր է, որը ապահովում է հայտատուն: Հայերեն թարգմանությունը հաստատվում է հայտատուի ստորագրությամբ և կնիքով:»:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հայտերի բացման օրը՝ 01.06.2026թ. ժամը 16:00–ին, (ըստ անհրաժեշտության կարող է հրավիրվել լրացուցիչ նիստ), որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-8, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | _______ | Տ. Քանքանյան |
| անդամներ | _______ | Ա. Մարգարյան |
| | _______ | Ա. Սիմոնյան |
| | _______ | Ս. Ասրյան |
| | _______ | Ա. Առուշանյան |
| | _______ | Ս. Ալեքսանյան |
| | _______ | Մ. Բաբայան |
| | _______ | Ա. Սերգոյան |
| Քարտուղար | _______ | Ա. Սարգսյան |